ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2023 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/49»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար դիզելային գեներատորի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/49» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 29.11.2023թ.-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 29.11.2023թ. տրամադրված պարզաբանումը՝

<u>Հարցադրում</u>

«Հարգելի գործընկերներ Խնդրում եմ պարզաբանել գնման առարկա հանդիսացող դիզելային գեներատորի տեխնիկական բնութագրի մասով. • Հոսանքի հաճախականությունը՝ 50-60Հց, Հարց- Հաճախականության պահանջը պետք է՞ լինի 50 Հց.՝ համաձայն ՀՀ ում գործող նորմի , թե այն պետք է համապատասխանի պահանջների մեջ նշված պայմանին ՝ այսինք 50 Հց. և 60 Հց. հաճախականությունների համապատասխանության : • Տեղափոխման, տեղադրման և ցանցային միացման աշխատանքների ապահովում, որի համար կպահանջվի տեղադրման վայրի նախապատրաստում, վերամբարձ կռունկ, առնվազն 200մ 1Х70մմ պղնձե մալուխ, անցքերի բացում, համապատասխան սարքավորումներ և մասնագիտական աշխատանքներ, Հարց- «տեղադրման վայրի նախապատրաստման» ընդհանրկանա պահանջի տակ ներառված են միայն հաջորդիվ ներկայացվա՞ծ կետերը , այն է «վերամբարձ կռունկ, առնվազն 200մ 1Х70մմ պղնձե մալուխ, անցքերի բացում, համապատասխան սարքավորումներ և մասնագիտական աշխատանքներ», թե ՞ այլ , տվյալ նկարագրում չներառված հարմարություններ և տեղակայումներ: առնվազն 200մ 1Х70մմ պղնձե մալուխ Հարց-Հաշվի առնելով այն որ պահանջվող գեներատորը եռաֆազ է խնդրում եմ պարզաբանել 200 մ. 1x 70 մմ պղնձ է մալուխի պահանջը , այսինք միաջիղ մալուխի պահանջը և անհրաժեշտության դեպքում տալ հավելյալ տեղեկատվություն պահանջվող մալուխի տոպոլոգիայի մասով /եռաջիղ, քառաջիղ , հնգաջիղ , այլ./ Հարց.- Խնդրում եմ տալ տեղեկատվություն գեներատորի տեղադրման վայրում հողանցման կոնտուրի առկայության մասով և գենեևատորի տեղադրման վայրից մինչ հողանցման կենտուրին միացման ամենամոտ կետի հեռավորությունը.»

<u>Պարզաբանում</u>

«Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված է «Հոսանքի հաճախականությունը՝ 50-60Հց», Ձեր կողմից առաջարկվող 50 Հց կամ 60 Հց ընդունելի է:

Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված է «Տեղափոխման, տեղադրման և ցանցային միացման աշխատանքների ապահովում, որի համար կպահանջվի տեղադրման վայրի նախապատրաստում, վերամբարձ կռունկ, առնվազն 200մ 1Х70մմ պղնձե մալուխ, անցքերի բացում, համապատասխան սարքավորումներ և մասնագիտական աշխատանքներ», որում նշված են դիզելային գեներատորի տեղափոխման, տեղադրման և ցանցային միացման աշխատանքների ապահովման պահանջները: Հրավերի տեխնիկական բնութագրով դիզելային գեներատորի կոնկրետ չափսեր չեն սահմանվել, անհրաժեշտության դեպքում՝ կարող եք ծանոթանալ տարածքին:

Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված է «առնվազն 200մ 1X70մմ պղնձե մալուխ»: Մեր հաշվարկով գեներատորից մինչև հոսանքի աղբյուրի միացումը կազմում է շուրջ 50մ, ուստի Ձեր կողմից առաջարկվող բոլոր տարբերակներն ընդունելի են:

Հողանցումը պետք է իրականացվի վաճառողի կողմից, անհրաժեշտության դեպքում՝ կարող եք ծանոթանալ տարածքին:»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/49» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010 511-787:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@court.am:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/49» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: